ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«19» մարտի 2019 թվականի № 25-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԻՋԵՎԱՆԻ ԳԻՆՈՒ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ)

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ԻՋԵՎԱՆԻ ԳԻՆՈՒ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2019 թվականի մարտի 18-ին թիվ 57-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

ՊԱՐԶԵՑ

Ընկերությանը 2018 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 01ԳԲ/29.4ԱԱ/6529-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը չի կատարել աշխատանքային նախագծում ամրագրված պահանջները և օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-561 պայմանագրի 3.4.1, 3.4.4, 3.4.7, 3.4.22 կետերով և 5-րդ մասով, պայմանագրի կից 1-ին հավելվածով սահմանված պարտավորությունները, ինչպես նաև սահմանված ժամկետում լիազոր մարմնին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները:

Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված դրույթները, աշխատանքային նախագծի և ընդերքօգտագործման Պ-561 պայմանագրի 3.4.1, 3.4.4, 3.4.7, 3.4.22 կետերով և 5-րդ մասով, ինչպես նաև պայմանագրին կից 1-ին հավելվածով սահմանված պարտավորությունները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք:

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջով Ընկերությանը առաջարկվել է 90-օրյա ժամկետում Նախարարությունում ներկայացնել վերոնշյալ խախտումները վերացնելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր: Ընկերությունը զգուշացումը ստացել է 2018 թվականի նոյեմբերի 8-ին,

սակայն զգուշացման հիմքերը վերացված լինելու փաստը հավաստող որևէ փաստաթուղթ Նախարարության կողմից չի ստացվել: 2019 թվականի մարտի 18-ի թիվ 57-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, սույն վարչական վարույթը մեկ անգամ երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

1. «ԻՋԵՎԱՆԻ ԳԻՆՈՒ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը.

Վարչական վարույթն իրականացնող հանձնաժողովի նիստին մասնակցող Ընկերության ներկայացուցիչներ՝ Էմիլ Ամիրխանյանը և Արթուր Հովհաննիսյանը ներկայացրին Ընկերության դիրքորոշումը.

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվում է միայն սույն օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով: Նույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունքը դադարում է, եթե լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմինն իրավունք չունի որոշում ընդունելու ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին, եթե իրավունք կրողը զգուշացման մասին ծանուցումը ստանալուց հետո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում, վերացրել է նշված հիմքերը:

Ընկերության ներկայացուցիչների պնդմամբ վերոնշյալ նորմերից հետևում է, որ ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վարույթի հարուցման ընթացակարգային նախապայման են հանդիսանում լիազոր մարմնի գրավոր նախազգուշացումը, և դրանից հետո Ընկերության կողմից 90 օրվա ընթացքում զգուշացմամբ նախատեսված խախտումները կամ թերությունները չվերացնելը:

Մինչդեռ, տվյալ դեպքում Լիազոր մարմինը զգուշացման վարույթ չի իրականացրել, և Ընկերությանը գրավոր զգուշացում չի տվել: Հետևաբար, բացակայում է դադարեցման վարույթ հարուցելու և ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու նախապայմանը, այն է՝ լիազոր մարմնի գրավոր նախազգուշացումը, և դրանից հետո Ընկերության կողմից 90 օրվա ընթացքում զգուշացմամբ նախատեսված խախտումները կամ թերությունները չվերացնելը:

Ընկերության ներկայացուցիչները հայտնել են նաև, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունք կրող իրավաբանական անձին կարող է տալ գրավոր զգուշացում, եթե նա՝ չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները, այդ թվում՝ ընդերքօգտագործման պայմանագրով, ծրագրով կամ նախագծով ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված իր պարտավորությունների իրականացմանն առնչվող պայմանները, բացառությամբ գործադուլների, տնտեսավարողից անկախ պատճառներով ծառայությունների ընդհատումների՝ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և այլ դեպքերի, անհաղթահարելի ուժի՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլն, որոնք 90 օրվա ընթացքում անհնար են դարձնում աշխատանքների կատարումը, և լիազոր մարմին են ներկայացվել համապատասխան փաստերը վկայող փաստաթղթերը:

Տվյալ դեպքում Ընկերության կողմից օգտակար հանածոյի արդյունահանմանը խոչընդոտ է հանդիսացել այն հանգամանքը, որ հորատանցքը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Աչաջուր համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում, և Համայնքը Ընկերության հետ կամավոր գույքային սերվիտուտ սահմանելու վերաբերյալ համաձայնության չի գալիս: Բացի այդ հորատանցքի հարակից տարածքը վարձակալությամբ տրամադրված է «Տավուշ հոլդինգ» ՍՊ ընկերությանը, չնայած այն հանգամանքին, որ Պայմանագրի 2.2 կետի համաձայն լիազոր մարմինը երաշխավորել է, որ հանքավայրի տեղամասը վարձակալության տրված չէ:

Նշված հանգամանքները խոչընդոտում են Ընկերությանը ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված օգտակար հանածոյի արդյունահանման կազմակերպմանը: Վերը նշված խոչընդոտը վերացնելու նպատակով Ընկերությունը ձեռնամուխ է եղել իր խախտված իրավունքների դատական կարգով պաշտպանությանը, մասնավորապես՝ Ընկերությունը 2019 թվականի փետրվարի 11-ին հայցադիմում է ներկայացրել ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Աչաջրի համայնքի՝ հողամասի նկատմամբ հարկադիր սերվիտուտ սահմանելու պահանջի մասին: Դատարանը 2019 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ Ընկերության հայցադիմումն ընդունել է վարույթ, իսկ 2019 թվականի մարտի 7-ի որոշմամբ՝ թիվ ՏԴ/0146/02/19 քաղաքացիական գործով նշանակել է նախնական դատական նիստ: Նույն գործով որպես երրորդ անձ է ներգրավվել նաև հողամասի վարձակալ «Տավուշ հոլդինգ» ՍՊ ընկերությունը:

Ընկերությունը գտնում է, որ Լիազոր մարմնի կողմից Ընկերությանը չէր կարող գրավոր նախազգուշացում տրվել, քանի որ օգտակար հանածոյի արդյունահանմանը խոչընդոտում են այնպիսի հանգամանքներ, որոնք Ընկերության կամքից անկախ են, և դրանք չեն կարող վերացվել 90 օրվա ընթացքում, այլ դրանք հնարավոր է հաղթահարել միայն Ընկերության օգտին վերջնական դատական ակտ կայացվելու պարագայում:

Ընկերության ներկայացուցիչները նաև հայտնեցին, որ ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար Ընկերությանը խոչընդոտել է նաև համապատասխան հողամասի վարձակալ «Տավուշ հոլդինգ» ընկերությունը: Մասնավորապես, վերջինս դեռևս 2017 թվականի հուլիսի 17-ին դիմել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչություն, խնդրելով արգելել Ընկերությանը իրեն վարձակալության իրավունքով պատկանող հողամասում աշխատանքների իրականացումը:

Բացի այդ, Ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ Ընկերության կողմից առհասարակ չի խախտվել ընդերքօգտագործման պայմանագիրը, քանի որ նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ով նախատեսված է, որ համապատասխան աշխատանքները Ընկերությունը իրականացնելու է 2017-2020թթ. ընթացքում, հետևաբար, Ընկերության կողմից պայմանագրի խախտում կարող է արձանագրվել միայն այն դեպքում, եթե Ընկերությունը օգտակար հանածոյի արդյունահանումը չսկսի նաև մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Վարչական վարույթի նյութերի ուսումնասիրությունից հետևում են հետևյալ փաստական հանգամանքները.

1. Նախարարության և Ընկերության միջև կնքված ընդերքօգտագործման թիվ Պ-561 պայմանագիրը:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/561 թույլտվությունը:

3. Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի գրությունն ուղղված ՀՀ բնապահպանության նախարարին:

4. «Տավուշ Հոլդինգ» ՍՊ ընկերության 2018 թվականի հուլիսի 16-ի թիվ 040 գրությունը՝ ուղղված ՀՀ բնապահպանության նախարարին:

5. «Տավուշ Հոլդինգ» ՍՊ ընկերության թիվ 039 գրությունը՝ ՀՀ Տավուշի մարզի Աչաջուր համայնքի ղեկավարին և ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնի պետին՝ իրեն պատկանող հողամասում որևէ որձողության իրականացումը կանխելու մասին:

6. ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՏԴ/0146/02/19 քաղաքացիական գործով նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշումը:

3. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Վարչական վարույթի քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում, գտնում եմ, որ վարչական վարույթն ենթակա է կարճման հետևյալ հիմնավորմամբ.

Վարչական վարույթն իրականացնող հանձնաժողովը վարչական վարույթի նիստերի շրջանակներում լսելով Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը, ուսումնասիրելով վարչական վարույթին առնչվող բոլոր փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

Ուսումնասիրելով Նախարարության և Ընկերության միջև կնքված թիվ Պ-561 ընդերքօգտագործման պայմանագրի 1-ին հավելվածով նախատեսված ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ներկայացված ֆինանսական առաջարկները, պարզ է դառնում, որ պայմանագրային պարտավորությունների մեկնարկի համար ժամկետ նախատեսված է 2017-2020 թվականը, այսինքն Ընկերությունը դեռևս ունի ժամանակ իր կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը սկսելու համար, ուստի վերջինսի կողմից տվյալ պահին պայմանագրային պարտավորությունների խախտում դեռևս առկա չէ:

Ընկերության ներկայացուցիչների կողմից ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է դառնում, որ «Տավուշ Հոլդինգ» ՍՊ ընկերության կողմից առկա է ակնհայտ խոչընդոտ Ընկերությանը արգելելու կատարել իր պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Նշված հարցի իրավական կարգավորման նպատակով Ընկերությունը հարկադիր սերվիտուտ սահմանելու պահանջով հայց է ներկայացրել դատարան, ինչը հաստատվում է ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՏԴ/0146/02/19 քաղաքացիական գործով 2019 թվականի մարտի 7-ին կայացված որոշմամբ:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունք կրող իրավաբանական անձին կարող է տալ գրավոր զգուշացում, եթե նա չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները, այդ թվում՝ ընդերքօգտագործման պայմանագրով, ծրագրով կամ նախագծով ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված իր պարտավորությունների իրականացմանն առնչվող պայմանները, **բացառությամբ գործադուլների, տնտեսավարողից անկախ պատճառներով ծառայությունների ընդհատումների՝ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և այլ դեպքերի,** անհաղթահարելի ուժի՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական

աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլն, որոնք 90 օրվա ընթացքում անհնար են դարձնում աշխատանքների կատարումը, և լիազոր մարմին են ներկայացվել համապատասխան փաստերը վկայող փաստաթղթերը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետ՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ԻՋԵՎԱՆԻ ԳԻՆՈՒ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲ ընկերության նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի մարտի 18-ին թիվ 57-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Ընդերքի գործակալության պետին՝ երկօրյա ժամկետում ծանուցել Ընկերությանը վարչական վարույթի կարճման հրամանի վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

4/17/2019

X

VERIFIED OCSP 17-Apr-19 15:57:21 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770418